

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆետոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Զուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артակ Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿԻԴՈՎՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿԻԴՈՎՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-XI Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC) Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC) Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՅՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՅՆԱՎՈՐԸ .....	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ**  
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ	214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**  
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	

## Հովիկ Գրիգորյան

### ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱ- ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ)

**Բանալի բառեր.** ՀՅԴ Ցուցական մարմին, «Նժույգի գործ», Տարեկանի տարբերակ, ուրբաթօրյա սելամըք, ձեռնառումբ, կառք-ռումբ, ՀՅԴ Խորհուրդ, Արևմտյան բյուրո, Ցուցական մարմնի տեղեկագիր, Ցուցականի մարմնի արձանագրություններ:

Նախորդ դարասկզբի հայոց ազատամարտի կարևոր դրվագներից մեկի՝ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի պատուհասման և դրան զուգահեռ ծրագրված այլ ձեռնարկների մասին այսօր հրապարակի վրա են բազմաթիվ տպագիր վավերագրեր, հուշագրություններ, տարաբնույթ գիտական ուսումնասիրություններ և հրապարակումներ: Առկա է մտայնություն, որ այդ հարցի վերաբերյալ պատմաբանն այլևս անելիք չունի: Մինչդեռ հիմնախնդրին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ հնչեցված կարծիքների և գնահատականների խայտաբղետությունն ու հակասականությունն ակնբախ վկայում են, որ այս հարցում պատմաբանի համար վաղաժամ է վերջակետ դնելը:

Մեր հրապարակումներից մեկում մանրամասն անդրադարձել ենք ՀՅԴ Ցուցական պատասխանատու մարմնի ձևավորման հանգամանքներին, նախքան Կ. Պոլիս անցնելն Աթենքում և Պիրեայում վերջինիս գումարած ժողովներին, դրանցում ընդունված առանցքային որոշումներին, այդ թվում՝ Ցուցական մարմնի «Փորձնական կանոնագրի» մշակմանը, ինչպես նաև Ցուցականի անդամների և օժանդակ գործիչների Կ. Պոլիս անցնելու հետ կապված, մինչ այդ ստվերում մնացած, հարցերի լուսաբանմանը<sup>1</sup>:

Սույն հոդվածով խնդիր է դրվում հետազոտելու արյունոտ սուլթանին պատուհասելու ձեռնարկի<sup>2</sup> գործնական նախապատրաստման առաջին փուլը, որը ժամանակագրորեն ընդգրկում է Ցուցականի անդամների Կ. Պոլիս ժամանելուց մինչև Վիտոշի աղետը ներառող շուրջ վեցամսյա ժամանակահատվածը: Մանրագնին քննության են առնվելու «Նժույգի գործ»-ի իրականացման նպատակով Ցուցական մարմնի կողմից առաջադրված բոլոր հնարավոր տարբերակները, դրանց թեր ու դեմ կողմերը, այդ և այլ հարցերում Ցուցականի անդամների շրջանում առկա տարակարծությունները, ձեռնարկի որոշակիացման հարցում կատարված հստակեցումները, Ք. Միքայելյանի Կ. Պոլսից Բուլղարիա անցնելու հանգամանքները, Վիտոշի աղետի հետ կապված հարցերը և այլն:

ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի կողմից Ցուցական պատասխանատու մարմնի կազմում ընտրված գործիչները, տևական նախապատրաստական աշխատանքներից հետո, 1904 թ. սեպտեմբերին ժամանում են Կ. Պոլիս: Հոնան Ղավթյանի փոխարեն իր կազմում ընդգրկելով Վռանշապուհ Քենդիրյանին, Ցուցական մարմինն ամբողջանում է<sup>3</sup>: Սկսվում է նրա գործունեության նոր փուլը: Ծանոթանալով տեղի պայմաններին, այն պետք է հստակեցնել ձեռնարկի իրականացման ձևը, կազմակերպել անհրաժեշտ գինամթերքի ու այլ պարագաների փոխադրումը և գործին պիտանի օժանդակ գործիչների ծայտյալ կենտրոնացումը Կ. Պոլսում:

Տեղում կատարած առաջին դիտարկումները լավատեսություն են ներշնչում Ցուցականի անդամներին: Առաջին հայացքից սուլթանն այնքան էլ անմատչելի չէր, ինչպես մինչ այդ կարծում էին: Հենց սկզբից մի կողմ են դրվում դրսում հղացած՝ օդապարիկի օգնությամբ Ելդրգի ապարանք թափանցելու կամ մեկ կիլոմետր հեռավորությունից ուրբաթօրյա սելամըքի արարողությունը գնդակոծելու ոչ իրատեսական ծրագրերը: Ընտրությունը կանգ է առնում

\* Հոդվածը ներկայացվել է 26.09.2019 թ., գրախոսվել է 09.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Գրիգորյան Հ., ՀՅԴ Ցուցական պատասխանատու մարմնի ստեղծումը և գործունեությունը մինչ Կ. Պոլիս անցնելը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2016, էջ 33-46:

<sup>2</sup> Ցուցական մարմնի փաստաթղթերում ձեռնարկին տրվել է «Նժույգի գործ» կոնսպիրատիվ անվանումը: Բնավ պատահական չէ հոդվածի խորագրում և բուն տեքստում այդ եզրույթի օգտագործումը:

<sup>3</sup> Ցուցական մարմնի մյուս անդամներն էին Քրիստափոր Միքայելյանը (Էլլեն), Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), Կարապետ Եղիկյանը (Սև Աշոտ), Արտաշես Սերենձյանը (Թորգոմ):

երկու հնարավոր տարբերակների վրա, որոնք ենթադրում էին ինչպես իրագործման տարբեր մոտեցումներ, այնպես էլ որակապես տարբեր ուժեր: Առաջինը տարեկանի տարբերակն էր, երկրորդը՝ ուրբաթօրյա սեւամլըքի: Երկուսի առանցքում էլ ընկած էր սուլթանի ջերմեռանդ մահմեդական և մուսուլմանների հոգևոր առաջնորդ (խալիֆ) լինելու հանգամանքը:

Նախ տարեկանի տարբերակի մասին: Դավադրության միջոցով գալով իշխանության և լինելով շատ կասկածամիտ, սուլթանն իր շրջապատում ամենուր դավադիրներ ու հեղափոխականներ էր փնտրում: Երկյուղելով իր անձի անվտանգության համար, նա Ելդըզի ամրացված ապարանքում, որը պաշտպանում էր ալբանացիներից կազմված մի քանի հազարանոց թիկնազորը, կամովին ինքնաարգելափակման էր ենթարկվել և մեկուսացել հպատակներից: Որպեսզի ստիպված չլինի ամեն ուրբաթ այցելել Կ. Պոլիս՝ մասնակցելու մահմեդականների ուրբաթօրյա կրոնական արարողություններին, սուլթանը Ելդըզի տարածքում կառուցել էր Սուլթանիե մզկիթը, որտեղ ամեն ուրբաթ պարտաձանաչ այցելում էր որպես ջերմեռանդ մահմեդական:

Այնուհանդերձ, սուլթանը ստիպված էր այդ ապրելակերպից որոշ շեղումներ անել: Տարվա մեջ երեք անգամ նա դուրս էր գալիս Ելդըզի պարիսպներից՝ որպես խալիֆ հպատակներին այցելություններ տալու համար: Առաջին անգամ դա տեղի էր ունենում Խրխայի-Շերիֆի տոնին՝ Ռամազանի 15-ին: Այդ օրը դուրս գալով Ելդըզի պալատից, նա ուղևորվում էր Թուփ-Կափու Սերայ՝ Սիրեքճիից վեր՝ Կ. Պոլսի մասում: Երկրորդ և երրորդ դեպքերը կապված էին մահմեդական տոների՝ Կուրբան և Ռամազան Բայրամների առաջին օրվա հետ, երբ նա իջնում էր Տոլմա Բաղչայի պալատ՝ շնորհավորանքներ ընդունելու: Ճիշտ է, այդ օրերին Կ. Պոլսի փողոցները, հատկապես սուլթանի անցնելիք ճանապարհը, լցվում էին զորքերով, իսկ նրա շքախումբն էլ անցնում էր խստագույն պաշտպանության ներքո, այնուհանդերձ, նա դառնում էր համենատաքար խոցելի:

Հնարավոր էր համարվում սուլթանի անցնելիք ճանապարհի վրա գտնվող շենքերից հզոր ռումբեր նետելով կամ գերհզոր ռումբի վերածած որևէ շենք պայթեցնելով վերջ տալ նրա կյանքին: Գաղափարը նոր չէր և այն կիրառելու ծրագիր ՀՅԴ-ն մեկ անգամ արդեն ունեցել էր՝ կապված 1896 թ. Ռամազանի 15-ի հետ, բայց ինչ-ինչ պատճառներով վերջին պահին ստիպված էր հրաժարվել դրանից<sup>1</sup>:

Երկրորդը ուրբաթօրյա սեւամլըքի տարբերակն էր: Ինչպես վերը նշվել է, սուլթանն իր պարտքն էր համարում մասնակցել ուրբաթ օրերին կատարվող սեւամլըքի արարողություններին: Այդ օրերին՝ կեսօրին նա պարտադիր հաճախում էր Սուլթանիե մզկիթը: Նման օրերին, դեռևս առավոտյան ժամը տասից, պալատական թաղը և դեպի այնտեղ տանող Պեշկեթաչի փողոցը լցվում էին հետևակ ու հեծյալ զորքերով, որպես կանոն, փողոցների սկզբնամասում ավելի խիտ շարքերով: Պալատից մզկիթ տանող 100-150 քայլ կազմող լայն ճանապարհի երկայնքով՝ երկու կողմերում խիտ կանգնում էր երկշարք հետևակ զորք՝ պալատական և մայրաքաղաքի զանազան գնդերից: Մի քանի շարք հեծելազորով լցվում էր նաև մզկիթի դիմաց գտնվող Մարգարան կոչվող հրապարակը: Նման ահռելի ուժով պաշտպանված սուլթանը, զինվորական ողջունների ուղեկցությամբ, պալատից կառքով հասնում էր մզկիթ, նամազից հետո շուրջ մեկ ժամ ապակյա պատշգամբի ետևից դիտում զորքի հանդիսավոր երթը, ապա այլ կառքով, ճանապարհը պաշտպանող հեծյալ և հետևակ զորքի պահպանության ներքո, միայնակ վերադառնում պալատ:

Ցուցականի անդամները քննարկում էին այդ արարողության ժամանակ սուլթանին ոչնչացնելու երկու տարբերակ:

Ա) Հնարավոր էր համարվում այդ նպատակով օգտագործել մզկիթից մոտ 60-70 քայլի վրա գտնվող և սուլթանի անցնելիք ճանապարհից 1,5-2 մետր բարձրություն ունեցող երկաթե վանդակով եզերված տաղավարը: Այն նախատեսված էր օտարերկրյա պատվավոր հյուրերի համար, որոնք նախապես երաշխավորվում էին իրենց երկրների դեսպանների կողմից: Նախատեսվում էր որպես օտարերկրացի հյուրեր տեղ գրավել այդ տաղավարում և հարմար պահին, երբ սուլթանն առավել մոտ կգտնվեր, ձեռնառումներ նետելով ոչնչացնել նրան: Ար-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Գրիգորյան Հ. Բ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, էջ 24-25:

տաքուստ պարզ այդ ծրագիրն, անշուշտ, ուներ իր դժվարությունները, որոնց կանդրադառնանք ավելի ուշ:

Բ) Տաղավարին որպես այլընտրանք կար կառք-ռումբի տարբերակը: Առաջարկվում էր պայթուցիկով բեռնված ու ռումբի վերածած կառքը հնարավորինս մոտեցնել մզկիթին և հարմար պահին, որպես հզոր ռումբ, պայթեցնել<sup>1</sup>:

Ի դեպ, կառք-ռումբի տարբերակի հետ կապված, հարկ ենք համարում անդրադառնալ ժամանակին ռուսական միջավայրում շրջանառված մի վարկածի: Նախորդ դարասկզբի ռուսական հեղափոխական միջավայրի աղմկահարույց սկանդալներից մեկը Եվնո Ազեֆի գործն էր: Լինելով պահնորդական բաժանմունքի (ախրանկա) բարձր վարձատրվող գործակալ, Ե. Ազեֆը միաժամանակ ղեկավարում էր էսէռների մարտական կազմակերպությունը: Նրա անվան հետ էին կապված ներքին գործերի նախարար Վ. Պլևեի և մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի ահաբեկումների կազմակերպումը: Ազեֆի երկակի խաղի բացահայտումն այնպես էր ցնցել պահնորդական բաժանմունքի նրա երկարամյա ղեկավար Լ. Ռատակին, որ վերջինս իր երբեմնի գործակալին սկսել էր վերագրել սատանայական ունակություններ: Լ. Ռատակի կարծիքով հենց Ազեֆն է եղել ռումբ-կառքի գաղափարի մտահղացողը և 1905 թ. հուլիսի 21-ին (Լ. Ռատակը սխալմամբ նշում է հուլիսի 11-ը կամ 12-ը) Ելդրզի պայթյունի կազմակերպիչը:

Իր վարկածի օգտին Լ. Ռատակը բերում էր երկու փաստարկ: Առաջինը՝ Ազեֆը նախկինում ունեցել է Վ. Պլևեին ռումբ-մեքենայով սպանելու ծրագիր, ինչը գրեթե նույնական էր ռումբ-կառքի գաղափարին: Երկրորդը՝ Ազեֆը Լ. Ռատակի հանձնարարությամբ 1905 թ. հունվարին եղել է Սոֆիայում պարզելու համար մակեդոնացի հեղափոխականների կողմից Կովկասի հեղափոխականներին, հատկապես ՀՅԴ-ին, զենք մատակարարելու հանգամանքները: Լ. Ռատակի կարծիքով հենց այդ այցի ժամանակ էլ Ազեֆը կարող էր մասնակից դառնալ սուլթանի ահաբեկման նախապատրաստմանը: Ուշագրավ է, որ տարիներ անց Ազեֆի կողմից սուլթանի ահաբեկման կազմակերպված լինելը հնարավոր է համարել նաև Ազեֆի գործունեությունը հետաքննող Մ. Ալդանովը: Բայց նրա կողմից գործի մանրամասն ուսումնասիրությունը և ՀՅԴ գործիչների հետ շփումները ոչինչ չեն ավելացրել այդ վարկածի օգտին<sup>2</sup>:

Վերն ասվածին հավելենք, որ ՀՅԴ-ի կողմից առայսօր հրապարակված որևէ փաստաթղթում, ուսումնասիրված արխիվային վավերագրերում և հուշագրական գրականության մեջ որևէ ակնարկ չկա «Նժույզի գործին» Ե. Ազեֆի ունեցած մասնակցության մասին: Ինչ վերաբերում է կառք-ռումբի գաղափարին, ապա, ինչպես նշվեց, այդ տարբերակն, ի սկզբանե, դեռևս 1904 թ. սեպտեմբերից, քննարկվել է Ցուցական մարմնի կողմից: Թուրքական հետաքննիչ մարմիններին տված իր ցուցմունքներում այդ փաստն արձանագրել է նաև Ցուցականին աջակցող բելգիացի Է. Ժորիսը<sup>3</sup>: Հետևաբար, 1905 թ. սկզբին Սոֆիայում եղած Ազեֆը չէր կարող ոչ միայն հեղինակ, այլև կազմակերպիչ լինել մի գաղափարի իրագործման, որն ուրվագծվել էր դրանից ամիսներ առաջ:

Միանշանակ հերքելով «Նժույզի գործում» Ե. Ազեֆի առանցքային դերակատարությունը՝ այնուհանդերձ չպետք է բացառել նրա հնարավոր անուղղակի առնչությունն այդ գործին: Մասնավորապես, Ցուցական մարմնի կողմից ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկագրում առկա է տեղեկատվություն, որ Բ. Միքայելյանի զոհվելուն հաջորդած ՀՅԴ Խորհրդի նիստից հետո (1905 թ. ապրիլ), ՀՅԴ Արևմտյան բյուրոյի և Ռոստոմի անմիջական աջակցությամբ Սաֆոն Ժնևում հանդիպել է ռումբերի գծով մասնագետ, հայտնի տեսաբան և պրակտիկ Ս. Ռուերիի հետ, ով ներկայացվել է որպես Վ. Պլևեի ու մեծ իշխան Սերգեյի ահաբեկումների մասնակից<sup>4</sup>: Ուշագրավ է, որ Ցուցական մարմնի ավելի վաղ՝ 1905 թ. մայիս-հունիսով թվագրվող արձանագրության մեջ, որը գրված է Սաֆոյի ձեռքով, ռումբերի գծով էսէռ

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Ղաշնակցութեան պատմութեան համար» (այսուհետ՝ «Նիւթեր»), խմբ. Հ. Տասնապետեան, Դ. հատոր, Պէյրուք, 1982, էջ 200-201:

<sup>2</sup> Տե՛ս Прайсман Л. Г., Террористы и революционеры, охранники и провокаторы, Москва, 2001, с. 4, 99, 394.

<sup>3</sup> Տե՛ս «Ելդրզի Մահափորձը. եղեռնական ատեանի դատաւարութիւնը տեղի ունեցած Պոլսոյ մէջ», 1905 նոյեմբերին (այսուհետ՝ «Ելդրզի Մահափորձը»), Աթէնք, 1933, էջ 42-43:

<sup>4</sup> Տե՛ս «Նիւթեր», Դ. հատոր, էջ 206:



մասնագետն անվանված է Մ. Մ., նշելով թե ազգանունը չի հիշում<sup>1</sup>: Մի կողմ դնելով այդ հանդիպման մանրամասները, նշենք, որ այն տպավորությունն է, որ ի դեմս Ս. Ռուերի - Մ. Մ.-ի կարծես գործ ունենք Ե. Ազեֆի հետ: Բանն այն է, որ ռուսալեզու պատմագիտական գրականության մեջ Ս. Ռուերի գործչի մեր փնտրտուքը արդյունք չի տվել: Հավանական է, որ այն կոնսպիրատիվ անվանում է: Մյուս կողմից՝ Ե. Ազեֆի կրած շուրջ 15 կոնսպիրատիվ անունների մեջ, Ս. Ռուերին բացակայում է (չկա նաև Մ. Մ.-ին մոտ որևէ տարբերակ)<sup>2</sup>, թեև վերը նշված ահաբեկումներին մասնակցած գործիչների մեջ հենց Ազեֆն է առավել մոտ Ս. Ռուերի - Մ.Մ.-ի կերպարին: Ինչևիցե, անգամ մեր կասկածները հաստատվելու դեպքում, «Նժույզի գործի» հետ Ե. Ազեֆի առնչությունը սոսկ էպիգոդիկ է եղել:

Վերադառնանք «Նժույզի գործին»: Այսպիսով, հրապարակի վրա մնում էին երկու հիմնական տարբերակներ՝ իրենց թեր ու դեմ կողմերով: Սելամլըքի տարբերակը հրապուրիչ էր այդ արարողության ամենշաբաթյա լինելու պատճառով: Այն հնարավորություն էր տալիս պարբերաբար հետևել և մանրակրկիտ ճշգրտել արարողության բոլոր դետալները՝ նվազագույն դարձնելով վրիպման հնարավորությունը: Մյուս կողմից, ժամանակի առումով այն չէր կաշկանդում, և հարվածը կարելի էր հասցնել Ցուցականի համար առավել բարենպաստ համարված պահին: Դրանով հանդերձ, Ելդըզի ապարանքի տարածքում սուլթանն անհամեմատ ապահովագրված էր: Նրա պահպանության համակարգը գրեթե կատարելության էր հասցված: Այն հաղթահարելու համար պահանջվում էր ինչպես սուլթանին տապալող զենքի տեսակի, այնպես էլ այն կիրառողների ճշգրիտ ընտրություն: Ըստ որում, անձնագոհության պատրաստ անձանց առկայությունը դեռևս բավարար չէր: Կասկածի տեղիք չտալու համար նրանք պետք է բավարարեին որոշակի պայմանների (օտարերկրացու արտաքին և շարժուձև, լեզուների իմացություն և այլն):

Տարեկանի տարբերակի առավելությունը սուլթանի արտաքուստ մատչելի լինելն էր: Նրա անցնելիք երթուղին ճիշտ կռահելու պարագայում ուղեկցող պահակախումբն ի գործու չէր լինելու կանխել շենքի լուսամուտներից ռումբերի նետումը կամ հարկ եղած պահին ռումբի վերածված շենքի պայթեցումը: Այս դեպքում քիչ էին խնդիրները նաև ռումբերի և ռմբածիզների ընտրության հարցում: Մեծ և հզոր ռումբերի պատրաստումը տեխնիկապես բարդ խնդիր չէր: Ցուցականի տրամադրության տակ եղած օժանդակ գործիչների թվում էլ քիչ չէին մարտական փորձ և կորով ունեցողները, ովքեր հարկ եղած պահին կարող էին գործածել ռումբերը կամ սուլթանի անցնելու պահին պայթեցնել նախապես ռումբի վերածած շինությունը: Բայց այս դեպքում աննպաստ էր այն, որ տարեկանի արարողություններն հազվադեպ էին: Ժամանակի առումով սահմանափակված լինելով, Ցուցական մարմինը չէր կարող իրեն շրայություն թույլ տալ մի քանի անգամ դիտելու տարեկանի հանդեսը: Մինչդեռ առանց դրա հնարավոր չէր մանրակրկիտ ուսումնասիրել արարողության ընթացքը և բացառել պատահականությունը:

Երկու դեպքում էլ թեր ու դեմի օգտին բերվող փաստարկներն այնքան զորեղ էին, որ մինչև նոյեմբեր ամիս երկու տարբերակները հավասարապես մրցակցում էին: Ռուբինայի հետ մի քանի անգամ մարզարանից դիտելով սելամլըքի արարողությունը, Ք. Միքայելյանն ընկալել էր տաղավարից սուլթանին ռմբահարելու բարդությունը և դրա հետ կապված տեխնիկական դժվարությունները: Այդ պատճառով նա սկզբնապես ավելի հակված էր տարեկանի տարբերակի գործադրմանը: Նրա հետ համամիտ էին նաև Վ. Քենդիրյանը և օժանդակ գործիչներ Ռուբինան (Արեշյան) ու տիկին Միշելը (Անչուկովա): Մինչդեռ մյուսները նախընտրելի էին համարում սելամլըքի տարբերակը: Նրանցից Սաֆոն պնդում էր կառք ռումբի տարբերակի վրա՝ որպես մինչ այդ անծանոթ և հաջողության մեծ շանս ունեցող միջոցի<sup>3</sup>: Տվյալ դեպքում հարցը չէր կարող վճռվել ձայների պարզ մեծամասնությամբ, քանի որ Ցուցական մարմնի «Փորձնական կանոնագրի» 13-րդ հոդվածը նախատեսում էր գլխավոր հարվածի գործնական ձևը որոշել «տեղումը գտնուող պատասխանատու ընկերների միաձայն հավանութամբ»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, Ե. հատոր, խմբ. Ե. Փամպուքեան, Պէյրուք, 2007, էջ 431:

<sup>2</sup> Տե՛ս Прайсман Л. Г., указ. соч., с. 420.

<sup>3</sup> Տե՛ս «Նիւթեր», Դ. հատոր, էջ 201-202:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 222:

Չունենալով միասնական կարծիք գլխավոր հարվածի ձևի հարցում, Ցուցական մարմինը ստիպված էր միաժամանակ աշխատանքներ տանել երկու ուղղությամբ: Այդ ընթացքում տեճագին ձևով Կ. Պոլիս էին մտցվում անհրաժեշտ ռազմանյութեր: Հաջողվել էր ներս մտցնել 204 կգ. մելինիտ կոչվող պայթուցիկ նյութ, մի քանի հարյուր կապսուլներ, ֆիշեր, պատրոյգներ, էլեկտրական հաղորդիչներ և այլ պարագաներ<sup>1</sup>:

Երկու դեպքում էլ անհրաժեշտ էին լինելու ռումբեր: Քանի որ ներսում հսկողությունը խիստ ուժեղ էր, Ցուցական մարմինն ի գորու չէր տեղում լուծելու այդ խնդիրը: Կ. Պոլիս Բեյկոզ արվարձանի մոտ գտնվող Պոլունեզ գյուղում արված եզակի փորձն անհաջող է անցնում: Հրաշքով խուսափելով բացահայտումից, հեղափոխականները հրաժարվում են նոր փորձերից<sup>2</sup>: Դրանց պատրաստմանը ձեռնամուխ են լինում Բուլղարիայում մնացած օժանդակ գործիչները:

Տարեկանի տարբերակի համար պատվիրվում են ամենամեծ ռումբեր, իսկ սելանըքի համար՝ փոքր: Հատկապես բարդ էր վերջին խնդրի լուծումը: Տաղավարից ռումբ նետողները իրենց հետ կարող էին տանել միայն այնպիսի ռումբեր, որոնք կտեղավորվեին գրպաններում, թևքի մեջ կամ կանանց ձեռքի պայուսակներում: Բացի այդ, նման ռումբերը նաև պետք է բավարարեին մի շարք լրացուցիչ պահանջներ:

1. Պետք է լինեին ոչ պատրոյգավոր, այլ ավտոմատ բռնկվող, քանի որ տաղավարում տեղ զբաղեցրած ռմբածիզները, լինելով խիստ հսկողության տակ, հնարավորություն չէին ունենալու լուցկու կամ գլանակի օգնությամբ գործի գցել դրանք:

2. Չափերով փոքր լինելով հանդերձ, թողնելիք ազդեցության առումով պետք է լինեին ուժեղ:

3. Պետք է լինեին անվրեպ: Խնդիր էր դրված պատրաստել այնպիսի ռումբեր, որ առկա 20 ռումբերից 10-ի նախնական փորձարկումը 100%-անոց արդյունք ունենա:

4. Պետք է գերծ լինեին տարբեր պատճառներով վաղաժամ բռնկման վտանգից, իսկ գետնին ընկնելուն պես անմիջապես պայթեին:

Դրված խնդիրն այն ժամանակ դյուրիններից չէր: Վառնայում հանգրվանած օժանդակ գործիչներ Սարգիսը (Պողոս Օղաբաշյան), Լևոն Գյուլումյանը և Կարոն (Համբարձում Աղաջանյան) ձեռնամուխ եղան դրա իրագործմանը<sup>3</sup>: Սարգսին նաև վերապահված էր կապող օղակի դեր ՀՅԴ Արևմտյան բյուրոյի և Ցուցական մարմնի միջև: Բանն այն է, որ վերջինս չէր կարող, առանց կասկածի տեղիք տալու, անմիջական կապ պահպանել ժնկի հետ, որը համարվում էր հեղափոխականների կենտրոն:

Մինչ Վառնայում պահանջվող ռումբերը պատրաստելու փորձեր էին արվում, իսկ ուրիշներն էլ զբաղված էին Հունաստանից ու Բուլղարիայից զինամթերք և այլ պարագաներ Կ. Պոլիս ներմուծելով, Ցուցական մարմինը, իր հերթին, շարունակում էր ուսումնասիրությունները: Մի կողմից մարզարանի հրապարակից մանրակրկիտ ուսումնասիրվում էր սելանըքի արարողությունը, մյուս կողմից՝ որոնվում համապատասխան շինություն տարեկանի տարբերակի գործադրման համար:

Որոնումներ են սկսվում սուլթանի անցնելիք փողոցի՝ Պեշիկ թաշի վրա հարմար տուն վարձելու կամ գնելու համար: Ընտրությունը կանգնում է Պեշիկ թաշից դեպի պալատ թեքվող անկյունի վրա գտնվող եռահարկ տան վրա: Այն ուներ դեպի փողոց նայող 16 լուսամուտներ և հարմար էր միանգամից մի քանի խոշոր ռումբեր նետելու համար: Տունը վարձելու գործը դյուրին չեղավ: Պալատին մոտ գտնվելու պատճառով Պեշիկ թաշը խիստ հսկողության տակ էր: Քրիստոնյաների համար դժվարացված էին այնտեղ տուն վարձելու պայմանները: Երբ Կ. Քենդիրյանը և տիկին Միշելը, Է. Ժորիսի և նրա կնոջ ուղեկցությամբ, փորձեցին վարձել տունը, ուշադրություն գրավեցին, հրավիրվեցին ոստիկանատուն և հարցուփորձի ենթարկվեցին: Տունը վարձելու համար տեղացի որևէ պատվավոր քաղաքացու երաշխավորություն պահանջվեց: Բելգիայի հյուպատոսին դիմելու առաջարկը Է. Ժորիսը մերժեց, պատճառաբանելով, որ իր նման համեստ ռոճիկ ստացող մարդու կողմից պալատի շրջակայքում եռահարկ տուն վարձելը կարող է կասկածի տեղիք տալ<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 202:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 203:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 202, 204:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 201-202:

Ելողզի պայթյունից հետո ստեղծված եղեռնական ատյանի նյութերում արձանագրված է Պեշիկ թաշի վրա տուն վարձելու համար Է. Ժորիսին արված առաջարկը, բայց, որքան էլ զարմանալի է, դատարանը չի խորացել այդ խնդրի մանրամասների մեջ և բավարարվել է Է. Ժորիսի տված, ճշմարտությունից հեռու, բացատրությամբ<sup>1</sup>: Ուշագրավ է, որ վերջինիս ցուցմունքներում որևէ խոսք չկա տարեկանի տարբերակի մասին: Նրա վկայությունները վերաբերվում են միայն սելամլըքի տարբերակներին:

Նոյեմբերին, կապված տարեկանի ծրագրից վերջնականորեն հրաժարվելու հետ, տունը վարձելու խնդիրը դուրս եկավ օրակարգից: Մոտեցել էր Խրիսայի Շերիֆի տունը՝ Ռամազանի 15-ը, մինչդեռ պատրաստի ռումբեր դեռևս չկային: Սելամլըքի տարբերակի կողմնակիցները տեղի տվեցին: Որոշվում է վերջնական վճռից առաջ գոնե մեկ անգամ դիտել տարեկանի տոնակատարությունը: Ցուցականի անդամներն ու օժանդակ գործիչները՝ թվով 12 հոգի, զույգ-զույգ տեղ զբաղեցրին Պեշիկ թաշի վրա՝ դիտելու սուլթանի երթը: Փողոցի երկայնքով կանգնած էին զորքերը և դպրոցականների խմբերը: Մեծ հանդիսավորությամբ անցան թիկնապահ հեծելախումբը, նախարարները, սուլթանի հարեմը: Բայց սուլթանը չհայտնվեց: Նա նախընտրել էր մի երթուղի, որով նախկինում երբևիցե չէր անցել: Իր պալատի պարտեզի կամրջով նա անցել էր Չրաղանի պալատ, իսկ այնտեղից՝ ռազմանավով հասել Թոփ-Կափուի Սարայ<sup>2</sup>: Դա նշանակում էր, որ տարեկանի տարբերակի հետ չէր կարելի հույսեր կապել:

Սելամլըքի տարբերակը մնում է միակը: Այդ մասին Ցուցական մարմնի արձանագրությունում ասված է. «Նոյեմբերին միայն... ձեռք քաշեցինք «տարեկանից» եւ կանգ առանք վերջնականապես շաբաթականի (ուրբաթօրյա սելամլըքի - Հ.Գ.) վերայ»<sup>3</sup>:

Սկզբնապես քննարկման առարկա են դառնում հինգ տարբերակներ.

1. Հյուրերի համար նախատեսված տաղավարից ռումբեր նետելով ոչնչացնել Մեծ մարդասպանին:

2. Նույն խնդիրը լուծել Սուլթանիե մզկիթի դիմացի Y փողոցից հզոր ռումբի վերածած կառքը պայթեցնելու միջոցով:

3. Պատահականությունը բացառելու նպատակով միաժամանակ իրականացնել թե՛ առաջին, թե՛ երկրորդ տարբերակները:

4. Առաջարկվում էր, որ թուրք կանանց տեսքով քողարկված 8-10 հոգի միանան մզկիթի կողքի փողոցում խռնվող մահմեդական կանանց: Հարմար պահին նրանցից ոմանք, ռումբեր նետելով, պետք է ցրեին մզկիթը պաշտպանող զորքի շարքերը, իսկ մյուսները, հարձակվելով «Նժույզի» վրա, ավարտին հասցնեին ծրագրված գործը:

5. Առաջ էր քաշվում նախկին ծրագրերից մեկի բարեփոխված տարբերակը: Պետք է գնվեր կամ վարձակալվեր մզկիթից 200-300 մ. հեռավորության վրա գտնվող մի տուն, որի լուսամուտներից կերևար Սելամլըքի արարողությունը: Հարմար պահին հրացանաձգությամբ պետք է ավարտին հասցվեր «Նժույզի գործը»:

Վերջին երկու առաջարկները քննություն չեն բռնում: Ըստ Ցուցական մարմնի տեղեկագրի՝ օրակարգից տարեկանի տարբերակի դուրս գալուց հետո «Նժույզի գործի» միակ նախագիծ մնացել էր վերը հիշատակված երրորդ տարբերակը<sup>4</sup>: Այդ հարցադրումն առկա է նաև Ցուցական մարմնի վերոնշյալ արձանագրության ստորև բերվող տողերում. «Շաբաթականը որոշուած էր կատարել երկու գործօններով՝ խնձորներ (ձեռնառումբեր - Հ. Գ.) ճից մինչեւ 4 - ծայրայեղ դէպքում միայն: Յամենայնդէպս չորսից ոչ պակաս:

Իբրեւ գլխաւոր դերակատար եւ կառք - իբրեւ երկրորդական գործօն (ընդգծումները մերն են - Հ. Գ.), որի վերայ նայողներ կային իբրեւ շուքի, «լիւքս»ի վերայ: Խնձորաւորները պէտք է անցնէին մի շարք հսկող աչքերի առաջից պաւիլիոն (նկատի ունի հյուրերի համար նախատեսված տաղավարը - Հ.Գ.) դեսպանութիւնների երաշխաւորութեամբ եւ վերջինների կաւազների առաջնորդութեամբ...»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Ելողզի Մահափորձը», էջ 30, 34:

<sup>2</sup> Տե՛ս «Նիւթեր», Դ. հատոր, էջ 203:

<sup>3</sup> Նույն տեղում, Ե. հատոր, էջ 426:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, Դ, հատոր, էջ 203:

<sup>5</sup> Նույն տեղում, Ե. հատոր, էջ 426:

Որոշ փաստեր, սակայն, վկայում են, որ գոնե ինչ-որ ժամանակ մրցակցություն է եղել առաջին և երկրորդ տարբերակների միջև: Ըստ որում, առաջինի պաշտպանը Ք. Միքայելյանն էր, իսկ երկրորդինը՝ Սաֆոն, գուցե նաև, Ցուցական մարմնի այլ անդամներ: Այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում Է. Ժորիսի ցուցմունքները: Չհերքելով «Նժույզի գործին» իր մասնակցությունը, նա տվել է ծավալուն ցուցմունքներ՝ համոզված, որ չի վնասում փախստական և զոհված ընկերներին: Անճշտություններով հանդերձ, դրանք արժեքավոր են դեպքերի տրամաբանությունն ընկալելու համար:

«Ժորիս յայտարարեց նաեւ,- ասվում է եղեռնական ատյանի նյութերում,-թէ իր տան մէջ Սամուել Ֆայնի (Ք. Միքայելյան - Հ.Գ.) նախագահութեամբ այս խնդրոյն վրայ երկարատեւ խորհրդակցութիւններ տեղի ունեցան, ուր որոշուեցաւ եղեռնական արարքը կատարելէ առաջ, գործածուելիք պոմպաներով փորձեր կատարել, և կամ «դժոխային մեքենայ» (մաշին էնֆէրնայ) ըսուած տիւնամիթի մեքենաները պատրաստելով և գայն կառքի մը մէջ դնելով բարձր վայրը մտցնել: Սամուել Ֆայն այս անհիծապարտ մտադրութիւններէն ո՛ր մէկին գործադրելի ըլլալը խորհրդակցութեան առարկայ ըրաւ (ընդգծումը մերն է - Հ.Գ.): Լիփա Ռիփս (Սաֆոն - Հ.Գ.) տիւնամիթ մեքենան կառքին մէջ դնելու կուսակից գտնուելով, թէւ այդ գաղափարը պաշտպանեց, սակայն ամբաստանեալ պէլճիացի ժորիս անհիծապարտ գաղափարին ճշդութեամբ և արագութեամբ գործադրուիլը ապահովելու եպերելի նպատակով յարմար տեսաւ պոմպաները բարձրավանդակին վրայէն նետել և այս մտօք իր եղեռնական գաղափարը յայտնեց:

Խռովարարական բուն մարմինը... խռովարարական գործերուն վարչութիւնն... յանձնած էր Սամուել Ֆայնի: Հետեւաբար, այս խորհրդակցութեան պահուն յայտնուած տարբեր կարծիքներէն բարձրավանդակին վրայէն պոմպա նետելու գաղափարը նախընտրած էր Սամուել Ֆայն, որ պոմպաներուն պահանջուած կատարելութիւնները փորձելու և զանոնք պահանջուած վիճակի հասցնելու համար, անցած Հոկտեմբերի (ճիշտը՝ դեկտեմբերի - Հ.Գ.), առաջի օրերուն աղջիկը նկատուած Ռուպինա Ֆայնի հետ մէկտեղ Պոլսեն հեռանալով Սօֆիա գացած և հոն... այս անհիծապարտ գաղափարով փորձեր կատարած պահուն, թէ՛ ինքը և թէ՛ իրեն ընկերակցող Վռամշապուհ Քէնտիրեան ըսպաննուած են, իրենց իսկ կատարած պոմպաներուն եղեռնական փորձին պահուն»<sup>1</sup>:

Մեկնաբանություններն ավելորդ են: Պարզապես արձանագրենք, որ Ցուցական մարմնի անդամների կարծիքների չհամընկնելը բացառում էր առաջին կամ երկրորդ տարբերակների օգտին միաձայն վճռի կայացումը, ինչը պահանջվում էր «Փորձնական կանոնագրով»: Արդյունքում ծնվում է միաժամանակ և՛ առաջին, և՛ երկրորդ տարբերակները ներառող, փոխզիջումային երրորդ տարբերակը, որում գլխավոր հարվածն, այնուհանդերձ, համարվում էր տաղավարից ձեռնառումներ նետելը:

Ըստ որում, այդ տարբերակն առավել բարդությունների հետ էր կապված, քանի որ այն իրականացնելու համար անհրաժեշտ էր լուծել երկու բարդ խնդիրներ.

1. Ձեռքի տակ ունենալ ռումբեր, որոնք կբավարարեին վերը նշված պայմանները:
2. Վճռական պահին ունենալ նվազագույնը 4-6 ռմբաձիգներ, որոնք, բացի ինքնագոհության գնալու պատրաստականությունից, կբավարարեին նաև այլ պայմանների (լեզուների իմացություն, եվրոպացու արտաքին ու շարժումն և այլն):

Ցուցականի մարմնի վերջերս հրապարակված արձանագրությունները վկայում են, որ 1904 թ. նոյեմբերին և դեկտեմբերի սկզբներին նրա ուշադրության կենտրոնում հենց այդ երկու հարցերն էին: Դրանցից առաջինի հնարավորինս արագ լուծումն էլ օրակարգի հարց դարձրեց Քրիստափորի Կ. Պոլսից հեռանալը: Արդեն 1904 թ. նոյեմբերի 8/13-ի նիստում Ցուցական մարմինը հետևյալ վճիռն է կայացնում. «որոշեց էլլէնի մեկնումը եւ իր ընելիքներն արտասահմանին մէջ - խնձորների փորձեր ընել մեր դրսի ընկերների՝ Կարոյի եւ Սարգսի միջոցաւ եւ իր ղեկավարութեամբ, անցագրեր ձեռք բերել եւ ի պահանջել հարկին՝ կառք յանձնարարել Եւրոպայի մէջ: Ասկէ զատ, էլլէն պիտի երթայ Եւրոպա, մասնագէտներու հետ խորհրդակցելու համար»<sup>2</sup>:

Այսպիսով, Քրիստափորի առջև դրվում էին հետևյալ խնդիրները.

<sup>1</sup> «Երլտըզի Մահափորձը», էջ 42-43:

<sup>2</sup> «Նիւթեր», Ե. հատոր, էջ 405:

ա. Բուլղարիայում շարունակել փորձարկումները և հնարավորինս արագ պատրաստել անհրաժեշտ ձեռնառումներ,

բ. ձեռնարկի անմիջական մասնակիցների համար ձեռք բերել անհրաժեշտ անցագրեր,

գ. Փարիզում կամ Ժնևում խորհրդակցել հեղինակավոր մասնագետների հետ ձեռնառումների և, հատկապես, կառք-ռումբի վերաբերյալ,

դ. Կազմակերպել ռումբ-կառքի պատվիրումը և փոխադրումը Կ. Պոլիս:

Քրիստափորի հեռանալը Կ. Պոլսից, ինչ-ինչ պատճառներով ձգձգվեց, մինչև որ որոշ հանգամանքներ ստիպեցին արագացնել նախապատրաստական աշխատանքները և հրատապ դարձրեցին նրա արտասահման դուրս գալը:

Նախ, տարին մոտենում էր ավարտին, մինչդեռ Ցուցական մարմինը վճռել էր առանց ծանրակշիռ պատճառների գործը չթողնել հաջորդ տարվան: Երկրորդ, Չմյուռնիայի գործիչները, որոնք նախապատրաստում էին «Նժույգի գործին» օժանդակող լրացուցիչ ձեռնարկները, աշխատելով անհամեմատ հանգիստ պայմաններում և ունենալով ավելի դյուրին խնդիրներ, լուրջ առաջընթաց էին արձանագրել և դժգոհ էին Կ. Պոլսում գործերի դանդաղ ընթացքից: Երրորդ, Կ. Պոլսում հաստատված շուրջ 10 օժանդակ գործիչներ, մնալով անգործ և ապրելով գրեթե մեկուսացած, ձանձրանում էին ու տրտնջում:

Վերջապես, գործը շտապողականություն էր պահանջում, քանի որ դավադրական ձեռնարկներն ամեն պահի կարող էին բացահայտվել կամ պարզ դիպվածով ձախողվել:

Այդ վտանգն իրական դարձավ կապված ձեռնառումների փորձարկումների հետ: Ֆիլիպեուն (Պլովդիվ), Աթենքում, ապա Վառնայում 4-5 ամիս շարունակ համառ փորձեր էին կատարվում անհրաժեշտ ռումբեր պատրաստելու ուղղությամբ, բայց արդյունքները զոհացնող չէին: Նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին օժանդակ գործիչներ Ցուլակը, Սարգիսը, Կարոն և Լևոնը, ռումբերի փորձարկումից վերադառնալիս, Վառնայում ձերբակալվում են: Նրանց մոտ հայտնաբերվում են ձեռնառումներ և մելինիտ: Ցուլակի և Լևոնի մոտ հայտնաբերվում են նաև Ցուցականի անդամների Կ. Պոլսի հասցեները: Բուլղար-մակեդոնացի հեղափոխական Բ. Սարաֆովի միջնորդությամբ ձերբակալվածներն ազատվում են և աքսորվում Հունաստան: Այդ դեպքը Ցուցական մարմնին ստիպում է արագացնել իր գործողությունները<sup>1</sup>:

Դեկտեմբերի 4-ին, ստանալով Վառնայի դեպքի լուրը, Ցուցական մարմինը դիմում է կանխարգելիչ քայլերի: Քանի որ օժանդակ գործիչ Քրիսի (Ք. Ֆանարձյան) և Է. Ժորիսի հասցեները վտանգված էին, նրանց տներից դուրս են բերվում և ապահով վայրեր փոխադրվում ամիսների ընթացքում այնտեղ կուտակված ռազմանյութերը: Միաժամանակ Քրիսին հանձնարարվում է մի որոշ ժամանակով ուրիշ բնակարան գտնել<sup>2</sup>:

Քրիստափորի Կ. Պոլսից հեռանալու նախօրեին՝ 1905 թ. դեկտեմբերի 5-ին, Է. Ժորիսի տանը գումարված նիստում Ցուցական մարմինը կարևոր որոշումներ են կայացնում թե՛ «Նժույգի գործի», թե՛ Չմյուռնիայի ձեռնարկների վերաբերյալ:

Մեկ անգամ ևս արձանագրվում է, որ «Նժույգի գործի» համար կա երկու լուծում. «1.- Խնձորներու գործածութիւն հիւրանոցէն (տաղավարից - Հ.Գ.), 2.- Մէկ կամ երկու կառք նիւթ (մելինիտ - Հ.Գ.) խնձորներու հետ միաժամանակ պայթեցնել»<sup>3</sup>:

Վճռվում է նաև տաղավար մտնող ռմբաձիգների հարցը: Քանի որ տաղավար մտնելու ցանկություն հայտնածներից Քրիսի անունն ու հասցեն Վառնայի ձերբակալություններից հետո վտանգված էին, բացառվում է նրա թեկնածությունը: Որոշվում է, որ զուտ կամավորության սկզբունքով, որպես եվրոպացի հյուրեր, տաղավար են մտնելու վեց հոգի՝ Քրիստափորը, Սաֆոն, Աշոտ Եղիկյանը, Վ. Քենդիրյանը, Կարոն և Ջահիլը (Մանոլ, Գրիգոր Սայան): Նույն նիստում որոշվում է նաև տաղավար մտնող 6 ռմբաձիգներին ընկերակցող կանանց եռյակը՝ տիկին Միշել, օրիորդ Էմիլ (Մարի Ջայց) և Ռուբինա Արեշյան: Ընտրված ռմբաձիգներից ոչ բոլորն էին բավարարում անհրաժեշտ պայմանները: Աշոտ Եղիկյանը չէր տիրապետում օտար լեզուների: Բացի այդ, նա և Վ. Քենդիրյանը չունեին օտարերկրյա անցագրեր, նաև, որպես տեղացիներ, կարող էին ձանաչվել: Վառնայի դեպքից հետո վտանգված էր նաև Մանոլ-Ջահիլը, որը նույնպես նոր անցագրի կարիք ուներ: Այսպիսով, Կ. Պոլսից դուրս եկող

<sup>1</sup> Տե՛ս «Նիւթեր», Դ. հատոր, էջ 205, Ե. հատոր, էջ 406-407, 426:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, Դ. Հատոր, էջ 205, Ե. հատոր, էջ 407:

<sup>3</sup> Նույն տեղում, Ե. հատոր, էջ 406:

Քրիստափորի հրատապ լուծելիք խնդիրներից մեկն էլ պետք է դառնար նոր անցագրերի ձեռք բերումը<sup>1</sup>:

Հաշվի էին առնվում նաև հնարավոր անցանկալի դեպքերը: Եթե նշված վեց հոգուց ունանք, ձերբակալության կամ այլ պատճառով, հարկ եղած պահին ի զորու չլինեին մտնել տաղավար, ջանքեր պետք է գործադրվեին կամավորների միջոցով ռմբածիզների պակասը լրացնելու համար: Հնարավոր չլինելու պարագայում առնվազն չորս ռմբածիզների առկայությունը պարտադիր էր համարվում, որպեսզի որևէ պատահականություն բացառվի և ռումբերից գոնե մեկը հասնի նպատակին: «Չորսը նուազագոյն թիւ համարուելով,- ասված էր Ցուցականի դեկտեմբերի 5-ի արձանագրության մեջ,- եթէ նախատօնակին՝ չորս թոյլտուութիւն ունենանք, գնալը պարտաւորիչ պիտի ըլլայ, եւ հետեւեալ օրը որոշեալ ժամանակին, որոշեալ տեղը չէկողը՝ փախուստ տուած պիտի համարուի (ընդգծումը մերն է - Հ.Գ.)»<sup>2</sup>: Կայացված որոշման վերջին տողերը հետագայում Ցուցականի ներսում որոշ անցանկալի խնդրումների առիթ դարձան:

Այսպիսով, ընտրված ռմբածիզներից չորսը Ցուցական մարմնի անդամներ էին, երկուսը՝ օժանդակ գործիչներ: Օժանդակ գործիչ Ջահիլը հովանոցի փոքր խանութի տիրոջ անվան ներքո ծառայած ամիսներ շարունակ մեկուսացած ապրեց Կ. Պոլսում՝ սպասելով իր ժամին, որն այդպես էլ չեկավ: Մյուս օժանդակ գործիչը՝ Կարոն, դրսից Կ. Պոլիս պետք է մտներ ավելի ուշ:

Ցուցականի նիստում սկզբունքային վճիռներ են կայացվում նաև ձեռնարկի երկրորդ մասի՝ ռումբ-կառքի վերաբերյալ: Որոշվում է ունենալ մեկ, հնարավորության դեպքում երկու, նման կառք՝ երեք կառապաններով (մեկը պահեստի): Որպես կառապաններ մատնանշվում են օժանդակ գործիչներ Սամաթիացի Ջարեհը (Խաչիկյան), Երվանդը և Մկրտիչը: Ապահովության համար ձեռնարկի իրագործման օրը յուրաքանչյուր կառապանի պետք է ընկերակցեր օժանդակ գործիչներից մեկը: Հնարավոր խուճապը մեծացնելու և ձեռնարկին ուժ տալու նկատառումով որոշվում է ունենալ նաև երեք երկրորդական կառքեր: Նախատեսվում էր այդ վարձված կառքերում զետեղել պայթուցիկ նյութեր, տանել մարզարան և տաղավարից առաջին ռումբի պայթեցումից հետո գործի դնել պատրույզն ու հեռանալ: Որպես դրա իրագործողներ մատնանշվում էին օժանդակ գործիչներ Քրիստ, Արամ Անդրեասյանը և բաթումցի Լևոնը:

Այսպիսով, Քրիստափորի Կ. Պոլսից հեռանալու նախօրեին, Ցուցական մարմինը կատարում է աշխատանքի հստակ բաժանում և ուրվագծում «Նժույզի գործի» իրագործման հետևյալ սխեման.

1. տաղավարից ձեռնառումների նետում,
2. առաջին ձեռնառումբի նետումից հետո գլխավոր ռումբ-կառքերի պայթեցում,
3. առաջին ձեռնառումբի նետումից հետո երկրորդական կառքերի պայթեցում:

Դրանով հանդերձ, կայացված որոշումը վերջնական չէր և հետագայում կարող էր փոփոխությունների ենթարկվել<sup>3</sup>:

Մինչ վերջերս անորոշություն կար այն հարցում, թե, ի վերջո, երբ է Քրիստափորը հեռացել Կ. Պոլսից: Ինչպես տեսանք, Է. Ժորիսի ցուցմունքներում խոսվում է հոկտեմբեր ամսվա մասին, ինչն, անկասկած ճիշտ չէ: Այլ հեղինակներ, այդ թվում Ռուբինան, խուսափել են հստակ ժամանակ մատնանշել: Վերջին տարիներին հրապարակված որոշ վավերագրեր թույլ են տալիս հստակություն մտցնել այդ հարցում: Ցուցականի արձանագրությունները վկայում են, որ Քրիստափորը Ռուբինայի ուղեկցությամբ Կ. Պոլսից հեռացել է 1904 թ. դեկտեմբերի 11-ին: Դա հաստատում է նաև Ֆիլիպեից 1904 թ. դեկտեմբերի 14-ին<sup>4</sup> ՀՅԴ Արևմտյան բյուրոյին հղած Քրիստափորի նամակը, որից երևում է, որ նա Ֆիլիպե է ժամանել նամակը գրելու նախորդ օրը<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 205, Ե. հատոր, էջ 406:

<sup>2</sup> Նույն տեղում, Ե. հատոր, էջ 406:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 406-407:

<sup>4</sup> Ե. Փամբուկյանը նամակի ուղարկման ամսաթիվ սխալմամբ վերծանել է հոկտեմբերի 14-ը, բայց ակնհայտ է, որ այն ուղարկվել է դեկտեմբերին՝ Վառնայի ձերբակալություններից հետո:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 409, 426:

Պատմագիտության մեջ միանշանակ չէ նաև այն հարցի պատասխանը, թե Ցուցականի անդամներից ինչու՞ հատկապես Քրիստափորն ընտրվեց Կ. Պոլսից դուրս գալու համար: Ցուցականի տեղեկագրում և վերը հիշատակված արձանագրություններում դա հիմնավորվում է նրա ֆրանսերենին տիրապետելու և բարեկամների լայն շրջանակ ունենալու հանգամանքով, ինչն, իբր, անհրաժեշտ էր մասնագետների հետ խորհրդակցելու համար<sup>1</sup>: Դա գուցե ճշմարտանման, բայց համոզիչ բացատրություն չէ: Ճիշտ է, Թորգոմը և Աշոտը լեզուներ չիմանալու և այլ պատճառներով պիտանի չէին այդ գործի համար, բայց Սաֆոն և Վ. Քենդիրյանը, տիրապետելով եվրոպական լեզուների, կարող էին հաջողությամբ լուծել դրված խնդիրները:

Ուշագրավ է, որ այդ հարցին երկու առիթներով անդրադարձել և Ցուցականի տեղեկագրի բացատրությունից էապես տարբերվող, նաև միմյանց հակասող բացատրություններ է տվել Ռուբինյան: Ցուցականի հետ կապված որոշ հարցեր հստակեցնելու նպատակով անդրադառնանք Ռուբինյանի թե՛ մեկ, թե՛ մյուս բացատրությանը:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում՝ 1907 թ. ապրիլի 28-ին, Ռուբինյան տվել է հետևյալ բացատրությունը. «Մենք եկանք Չմիումիայից սեպտեմբերին, եւ քիչ ժամանակ յետոյ գնացինք կառքով Սելամլըք... մենք կանգնեցուցինք եւրոպացւոց տեղը. ես եւ հայրիկը [Քրիստափորը] դիտում էինք տերրասից (տաղավարից - Հ.Գ.). եւ նա այդ ժամանակ որոշեց ռումբով գործել տերրասից. կառքի մասին չէինք էլ մտածում: Երբ Կարոյին եւս հեռացրին եւ որովհետեւ խնձորները [ծեռնառումբերը] գլխաւոր գէնքն էին մեզ համար, *հայրիկն ի՛նքը որոշեց գործը գլուխ բերել...* (ընդգծումը մերն է - Հ.Գ.)»<sup>2</sup>:

Մինչդեռ տասնամյակներ անց՝ 1939 թ. մարտի 3-ին, Ա. Գյուլխանդանյանին գրած նամակում Ռուբինյան տալիս է միանգամայն այլ բացատրություն. «Նոյն տարվա (1904 թ. - Հ.Գ.) վերջին, *ժողովի* (նկատի ունի Ցուցական մարմնի ժողովը - Հ. Գ.) *որոշումով եւ Սաֆոյի ճնշումով, Քրիստափորը Պոլսից Բուլղարիա անցաւ. հակառակ իր կամքին* ինձ հետ միասին. ռումբերի փորձերը կատարելու համար: Դրա *պատճառը այն էր, որ երիտասարդ ընկերներ, որ փորձերի գործով զբաղուում էին, ծեռքակալուեցին* Յունաստան (պետք է լինի Բուլղարիա - Հ.Գ.) *եւ էլ չէին ուզում շարունակել փորձերը*» (ընդգծումները մերն են - Հ.Գ.)<sup>3</sup>:

Մի կողմ դնելով փաստական անձշտությունները, որոնք պայմանավորված էին Սաֆոյի հանդեպ Ռուբինյանի տածած հակակրանքով և տասնամյակներ անց դեպքերի մասին նրա հուշերի բնական աղավաղմամբ, արձանագրենք բերված վկայություններում առկա երկու հակասություններ, որոնք, խնդրին վերաբերող վավերագրերի ժամանակին մատչելի չլինելու պատճառով, որոշակի շահարկումների տեղիք են տվել:

Առաջին բացատրության մեջ Ռուբինյան Ցուցական մարմնի որոշման հետ է կապում «Նժույզի գործին» Կարոյի հետագա մասնակցության դադարեցումը և նրա հեռացումը: Մինչդեռ երկրորդ դեպքում պնդում է, որ ռումբերի փորձարկման պատճառով ձերբակալված երիտասարդները, ազատվելով, իրենք չեն ցանկացել շարունակել փորձերը: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում Ռուբինյան ճիշտ չէ: Նախ, ինչպես վերը տեսանք, Քրիստափորի արտասահման մեկնելու հարցը որոշվել է Ցուցական մարմնի 1904 թ. նոյեմբերի 8-ի նիստում՝ մինչ Կառնայի ձերբակալությունները: Երկրորդ, Ցուցականի 1904 թ. դեկտեմբերի 5-ի նիստի արձանագրությունից ակնհայտ է, որ անգամ Կառնայի դեպքից հետո Կարոն չի հեռացվել և դիտարկվել է որպես տաղավար մտնող 6 ռմբածիգներից մեկը, որն ավելի ուշ պետք է մտներ Կ. Պոլիս: Ի դեպ, նույն նիստը որոշակի առաջադրանքներ էր նախատեսել նաև մյուս ձերբակալվածների՝ Սարգիսի և Լևոնի համար:

Կարոյի հետ կապված շահարկումներին վերջ տալու համար կատարենք որոշ ճշգրտումներ: «Նժույզի գործին» նրա մասնակցության վերաբերյալ մինչ օրս եղած հրապարակումներն անորոշ են: Դրանցում լուկ խոսվում է այն մասին, որ նա Քրիստափորի հանձնարարությամբ մտել է Կ. Պոլիս և կատարել նրա հանձնարարությունները<sup>4</sup>: Այսօր կարող ենք բացել որոշ փակագծեր: Կարոն Կ. Պոլիս է մտել Քրիստափորի այնտեղից հեռանալուց հե-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, Դ հատոր, էջ 205, Ե. հատոր, էջ 426:

<sup>2</sup> Նույն տեղում, Գ. հատոր, բ. տպագր., խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրուք, 2007, էջ 263:

<sup>3</sup> Աւօ, Ռուսիան Օհանջանեան, «Յեղափոխական ալպոմ», 1972, N 4, էջ 109:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 106: Նաև՝ Վալադեան Վ., Համբարձում Աղաջանեան, «Հայրենիք» ամսագիր, 1959, N 1, էջ 14:

տո՝ 1905 թ. հունվարի վերջին և, ըստ Ցուցական մարմնի արձանագրությունների, այնտեղ մնացել երկու ամսից ավելի: Լինելով եռանդուն խառնվածքի տեր, նա կարճ ժամանակ անց ձանձրացել է Կ. Պոլսում աննկատ ապրելու պարտադրանքից և, չնայած Քրիստափորի գոհվելուց հետո տված խոստմանը՝ սպասել մինչև վճռական պահը, մեկ ամիս անց, ստացել է իր պահանջած «արձակուրդը» և վերջնականապես հեռացել Կ. Պոլսից՝ առանց «Նժույզի գործի» եզրափակիչ արարին որևէ մասնակցություն ունենալու<sup>1</sup>: Այս առումով Կարոյի հեռացման վերաբերյալ Ռուբինայի խոսքերը ճիշտ չեն:

Այժմ երկրորդ հակասության մասին: Առաջին դեպքում Ռուբինան շեշտում է, որ Քրիստափորն ինքն է որոշել անձամբ զբաղվել ձեռնառումների խնդրի լուծմամբ: Մինչդեռ երկրորդ դեպքում Քրիստափորի Կ. Պոլսից հեռանալը նա կապում է Սաֆոյի ճնշմամբ Ցուցական մարմնի կայացրած որոշման հետ և պնդում, որ Քրիստափորն իր կամքին հակառակ է անցել Բուլղարիա: Այս հարցում ճշմարտությանը մոտ է Ռուբինայի նախնական բացատրությունը: Ուշագրավ է, որ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում կտրուկ ելույթներ ունենալով Սաֆոյի դեմ, Ռուբինան, այնուհանդերձ, այն ժամանակ այդ հարցում նրան ուղղակի չի մեղադրել և Քրիստափորի Բուլղարիա անցնելը բացատրել է ձեռնառումների խնդիրն անձամբ լուծելու նրա մտադրությամբ:

ՀՅԴ Արևմտյան բյուրոյին հղված՝ 1904 թ. դեկտեմբերի 14-ով թվագրվող նամակում Քրիստափորն ինքն էլ նմանատիպ բացատրություն է տալիս Կ. Պոլսից իր հեռանալուն. «Համբերություններս հատաւ խնձորներին սպասելուց եւ վերջ ի վերջոյ վիճակուեց ինձ յանձն առնել այս վերին աստիճանի անհաճոյ ճանապարհորդութիւնը գործի վայրից դէպի դուրս: ...ամէն բան ինքս պէտք է կրկնեմ: Ինչ որ է, ի հարկէ կ'անեմ հարկաւորը... Ընկերներս, համարեա զինադադարի մէջ, ինձ են սպասում: Կարող էք ուրեմն երեւակայել՝ թէ որքան եմ շտապում շուտ վերջացնել այստեղ գտնելու ինչ հարկաւոր է»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Քրիստափորի նամակում ոչ մի խոսք չկա իր հանդեպ գործադրված պարտադրանքի մասին: Անշուշտ, Կ. Պոլսից դուրս գալը նրա համար հաճելի չէր, բայց դա թելադրված էր ոչ թե պարտադրանքով, այլ՝ գործի շահերով: Լինելով ձեռնառումների միջոցով սուլթանին ահաբեկելու տարբերակի համոզված կողմնակից, նա Ցուցականի անդամներից ամենազգայունն էր Բուլղարիայում կատարվող փորձարկումների հարցում: Նաև չպետք է անտեսել, որ ռումբերի փորձարկման աշխատանքներում ներգրավված էին «Փոթորիկ»-ի գծով նրա գործակիցներ Սարգիսը և Կարոն: Նրանց պարբերական անհաջողություններն, անշուշտ, խռովում էին Քրիստափորի անդորրը: Նշված հանգամանքները նրան, իրոք, կարող էին մղել դեպի Բուլղարիա: Ցուցականի՝ ձեռնառումների հարցում թերահավատ անդամներին, ովքեր փորձում էին առաջին պլան մղել կառքի տարբերակը, նա պետք է գործով ապացուցեր ձեռնառումների տարբերակի իրատեսական և արդյունավետ լինելը:

Կատարելագործված ձեռնառումների պատրաստումը Քրիստափորի համար դառնում է պատվախնդրության հարց: Նման ռումբ կարող էր ստեղծել միայն նա, ով քաջատեղյակ էր դրանց հնարավոր կիրառման պայմաններին: Ուշագրավ է, որ իր կյանքի վերջին երկու և կես ամիսներին Քրիստափորը բացառապես զբաղված էր իրար հետ փոխկապակցված երկու խնդիրների լուծմամբ՝ ռումբերի կատարելագործմամբ և ձեռնարկի մասնակիցների համար օտարերկրյա պատշաճ անցագրեր ձեռք բերելու հարցով: Վերջին խնդրի հետ կապված արձանագրենք, որ ՀՅԴ Արևմտյան բյուրոյին հղված՝ 1904 թ. դեկտեմբեր - 1905 թ. հունվարով թվագրվող նրա նամակներում առավել քննարկված հարցերից մեկը անցագրեր (նախընտրելի էր՝ ֆրանսիական, ամերիկյան, պարսկական, ռուսական) հայթայթելու և իրեն ուղարկելու հարցն էր<sup>3</sup>: Մինչդեռ այդ ընթացքում նա ոչինչ չի ձեռնարկում ժնկում կամ ֆրանսիայում մասնագետների հետ խորհրդակցելու, կառք պատվիրելու և Կ. Պոլիս առաքելու ուղղությամբ:

Դառնանք ձեռնառումների հարցին: Մինչ «Նժույզի գործին» ձեռնամուխ լինելը Քրիստափորը քիչ էր առնչվել պայթուցիկ նյութերի և ռումբերի հետ: Նա արագ մխրձվեց այդ ոլորտը: 1904 թ. ամռանը ժնկ ուղարկված նրա նամակները վկայում են, որ նա գործնական մասնակցություն է ունեցել «Նժույզի գործի» համար անհրաժեշտ զինամթերքի, պայթուցիկ-

<sup>1</sup> Տե՛ս «Նիւթեր», Ե. հատոր, էջ 426, 428-429:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 409-410:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 409-412:



ների և սարքավորումների որոնմանը, ընտրությանն ու ձեռքբերմանը, մոտիկից ծանոթացել դրանց հատկություններին, այդ առնչությամբ անգամ գործնական խորհուրդներ տվել զինակիցներին<sup>1</sup>:

Բուլղարիա անցած Քրիստափորը հաստատվում է Ֆիլիպեում: ՀՅԴ Բալկանյան կ. կոմիտեի անդամներ Կարապետ Պիոնյանի և Երվանդ Ալաջաջյանի աջակցությամբ Թաթար Բազարձըլի կայարանի մոտ նա իրականացնում է երկամսյա փորձերի նոր շարք: Նրա անմիջական աջակիցներն էին Ռուբինյան, Ֆիլիպեում բնակվող Անտոն Գոշը, դեկտեմբերի վերջին նրանց միացած Սարգիսը և 1905 թ. հունվարի սկզբին ժամանած Կոստանդինը (Կոստի Համբարձումյան)<sup>2</sup>: Ռուբինայի մաթեմատիկական գիտելիքները օգնում են նախագծելու այն զսպանակը, որը պետք է ընկներ Քրիստափորի կատարած գյուտի հիմքում: Բանն այն է, որ Քրիստափորի ուշադրությունը կենտրոնացած էր այն ժամանակ դեռևս լուծման կարոտ մի խնդրի՝ ձեռնառումբի համար ավտոմատ գլխիկ ստեղծելու վրա, ինչը թույլ կտար անվրեպ գործածել սուլթանի համար նախատեսված ռումբերը: Այդ հարցում հասնելով հաջողության, Քրիստափորն ամբողջովին տարվում է իր գյուտը քայլ առ քայլ կատարելագործելու աշխատանքներով<sup>3</sup>: 1905 թ. հունվարի 4/16-ով թվագրվող նամակում նա ՀՅԴ Արևմտյան բյուրոյին տեղեկացնում է փորձարկումների առաջին փուլի ավարտի մասին. «Իմ հարցերը տակաւին չվերջացան. փորձերը տանում են երեք սիստեմով: Սրանց մասին պարտք կը համարեմ ձեզ ուղարկել մի փոքրիկ տեղեկագիր, երբ կ'ավարտեմ ամէն ինչ: Մնում են մեծ փորձերը դրսում, իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան հինգը պայթեցնելով...»<sup>4</sup>:

Նույն մարմնին հղված 1905 թ. փետրվարի 19-ի նամակում Քրիստափորը տեղեկացնում է գլխավոր փորձերն ավարտելու մասին. «Փորձերս ավարտել են ամենագլխավոր մասերում, բայց առ ժամանակ դեռ պիտի մնամ»<sup>5</sup>: Բուլղարիայում մի որոշ ժամանակ ևս մնալը նա բացատրում էր նոր փորձարկումներ կատարելու, Ցուցական մարմնի համար հարկավոր իրեր պատվիրելու և հատկապես Ռուսաստանից հատուկ այդ նպատակով ժամանող զինվորական մասնագետի հետ խորհրդակցելու անհրաժեշտությամբ: Նա այնքան էր կլանված այդ խնդիրներով, որ ժամանակ չի գտնում մասնակցելու ՀՅԴ Խորհրդի 1905 թ. փետրվարին գումարվելիք նիստին<sup>6</sup>: ՀՅԴ Արևմտյան բյուրոյին այդ կապակցությամբ հղած նամակում նա գրում է. «...մենք այնքան շտապում ենք, որ այստեղի անելիքներս վերջացնելուց յետոյ չմնայ որեւէ զգալի պակաս, որը հարկաւոր լինի լրացնել Եւրոպայում, իմ այդտեղ գալը դժուար կը լինի արդարացնել, որովհետեւ Վիշապից (Վ. Պոլիս - Հ.Գ.) կը խլի առնուազը մի շաբաթ. 10-12 ինձ սպասող հոգու համար դա զգալի ժամանակամիջոց է՝ ներկայ մեր փափուկ դրութեան մէջ...»<sup>7</sup>:

Ցուցական մարմնի գործունեության այս փուլի հետ կապված հնարավոր չէ շրջանցել մի խնդիր, որն արծարծվում է Ռուբինայի նամակում և ժամանակին դարձել է նաև ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի քննարկման առարկա: Խոսքը Ցուցական մարմնի անդամների միջև առկա հակասությունների, Վ. Պոլսում Քրիստափորի որոշակի մեկուսացվածության, պարտադրված Բուլղարիա անցնելու և, այդ ամենով պայմանավորված, զինակիցներից նրա դժգոհության, զուցե նաև վիրավորվածության մասին է: Քրիստափորի պարտադրված Բուլղարիա անցնելու հարցադրումը վերն արդեն հերքվել է: «Նժույգի գործից» շուրջ 115 տարի անց մյուս հարցերում ևս հստակություն է պետք մտցնել: Առավել ևս, որ դրանց վերաբերյալ ասեկոսեները ժամանակին շահարկումների առիթ են տվել: Մեր ձեռքի տակ են Ցուցական մարմնի արձանագրությունների մեծ մասը, ՀՅԴ Արևմտյան բյուրոյին Ցուցականի անդամների հղած մի շարք գրություններ և այլ վավերագրեր: Չնայած խնդրի վերաբերյալ որոշ փաստաթղթեր այսօր էլ հասանելի չեն և դրանց մասին լոկ կռահումներ կարելի է անել, այնուհանդերձ, հիմք ընդունելով առկա վավերագրերը և ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում Սաֆոյի,

<sup>1</sup> Տե՛ս Վարանդեան Մ., Քրիստափոր Միքայելեան, «Նորք», Ե., 1991, N 10-12, էջ 167:

<sup>2</sup> Տե՛ս «Նիւթեր», Ե. Հատոր, էջ 411-412:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 205: Նաև՝ «Յեղափոխական ալպոմ», 1972, N 4, էջ 109:

<sup>4</sup> «Նիւթեր», Ե. հատոր, էջ 413:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949, էջ 237:

<sup>7</sup> «Նիւթեր», Ե. Հատոր, էջ 411:

Թորգոմի ու Ռուբինայի տված կցկտուր, երբեմն իրար հակասող բացատրությունները, կարելի է մոտավոր պատկերացում կազմել մեզ հետաքրքրող հարցի մասին:

«Նժույզի գործում» գլխավոր հարվածի հարցում Ցուցականի անդամների միջև առկա տարակարծությունը բնական էր: Նման պայմաններում նաև բնական էր հենց Քրիստափորի Բուլղարիա անցնելու և ձեռնառումների կատարելագործման աշխատանքներն արագացնելու վերաբերյալ Ցուցական մարմնի որոշումը: Կարծում ենք, այլևս դրան անդրադառնալու հարկ չկա:

Եղել են նաև այլ կարգի տարակարծություններ: Գայթակղության հարց է եղել հատկապես դրամական խնդիրը: Մեծ զոհողությունների գնով հայթայթելով ազատամարտի, այդ թվում՝ «Նժույզի գործի» համար անհրաժեշտ դրամը, Քրիստափորը, բնականաբար, խանդով էր վերաբերվում շռայլ ծախսերին: Նա հավանություն չէր տալիս Ջմյուննիայի գործիչների ներկայացրած ծրագրին, որը խոշոր ծախսեր էր պահանջում: Բուլղարիայում գտնվելու օրերին նա կտրուկ հանդես է գալիս Կ. Պոլիս 3000 ռուբլի ուղարկելու Ցուցական մարմնի համառ պահանջների դեմ: ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին տված բացատրություններում Սաֆոն և Թորգոմը ընդունել են Ցուցականի մյուս անդամների և Քրիստափորի միջև առկա տարակարծությունը դրամական հարցերում<sup>1</sup>:

Տարակարծությունների տեղիք է տվել նաև Ռուբինայի հարցը: Ցուցականի անդամները գտնում էին, որ Քրիստափորը միայնակ պետք է անցնի Բուլղարիա՝ Ռուբինային թողնելով Կ. Պոլսում: Նրանց կարծիքով Բուլղարիայում Քրիստափորի կողքին Ռուբինայի նկատվելը կարող էր բացահայտել ձեռնարկին կանանց մասնակցության փաստը և վտանգել գործը: Ճիշտ է, ի վերջո, Ռուբինան Քրիստափորի հետ հեռացավ Կ. Պոլսից, բայց պայմանով, որ վերջինս նրան Ֆիլիպետում չի պահի: Քրիստափորը խոստացավ, որ Ռուբինան կմեկնի Բեռլին՝ քրոջ մոտ և իրեն կմիանա միայն Կ. Պոլիս վերադառնալու պահին: Չնայած այդ խոստմանը, Ռուբինան մինչև վերջ մնաց նրա կողքին և մասնակցեց ձեռնառումների փորձարկումներին: Բնական է, որ այս հարցում երկուստեք դժգոհության որոշակի նստվածք պահպանվեց<sup>2</sup>:

Վերջերս շրջանառության մեջ դրված մի շարք վավերագրեր վկայում են, որ Ցուցականի անդամների և Քրիստափորի հարաբերություններում որոշ լարվածություն վերջին ամիսներին, այնուհանդերձ, կար: Դրա պատճառը պատմագիտության ուշադրությունից ցայսօր դուրս մնացած մի խնդիր էր: Խոսքը Ռուբինայի, Սարգսի և Կոստանդինի կողմից, առանց Քրիստափորի իմացության, հղացված մի ծրագրի մասին է, որին, տեղյակ էր նաև ՀՅԴ Արևմտյան բյուրոն:

Բանն այն է, որ ՀՅԴ ղեկավարությունը ուշացումով սկսել էր գիտակցել այն մեծ վտանգը, որը սպառնում էր Քրիստափորին՝ «Նժույզի գործին» նրա անմիջական մասնակցության դեպքում և վերջին պահին փորձեց կանխել դա: Պատահական չէ, որ ՀՅԴ Արևմտյան բյուրոյի անունից գրված նամակներում Ռոստոմը համառորեն Քրիստափորին հրավիրում էր ժնև, իսկ եթե դա հնարավոր չէ, առաջարկում հանդիպում Վիեննայում, Բուդապեշտում, անգամ Բուլղարիայում՝ «հարկավոր գործի» կամ «ուրիշ խնդիրների համար» (ընդգծումը մերն է - Հ.Գ.): Նա և Արևմտյան բյուրոյի անդամները հույս ունեին համոզել Քրիստափորին հրաժարվել տաղավար մտնելու գաղափարից և համաձայնվել, որ իր փոխարեն այնտեղ գնա այդ գործը հանձն առնող այլ գործիչ<sup>3</sup>: Տեղյակ չլինելով նրանց մտադրությանը, Քրիստափորը, իր գործի հրատապությունը շեշտելով, տևական ժամանակ հրաժարվում էր այդ հանդիպումից, որն այդպես էլ տեղի չունեցավ:

Ավելի գործնական էին Սարգիսը, Կոստանդինը և Ռուբինան: Ինչ-որ ճանապարհով տեղյակ լինելով, որ Քրիստափորը տաղավար մտնող վեց ռմբածիզներից մեկն է լինելու և հասկանալով, թե ՀՅԴ-ի համար ինչպիսի անուղղելի կորուստ կլինի վերջինիս հնարավոր նահատակությունը, այդ գործիչները փորձում են կանխել նրա մասնակցությունը ձեռնարկի վճռական արարին: Օրակարգում հայտնվում է Քրիստափորին նախ Սարգսով, ավելի ուշ՝ Կոստանդինով փոխարինելու գաղափարը:

Սարգիսը դեռևս Աթենքից նամակով դիմում է Ցուցական մարմնին և առաջարկում իր թեկնածությունը՝ Քրիստափորին փոխարինելու համար: Ցուցական մարմինն իր պատասխա-

<sup>1</sup> Տե՛ս «Նիւթեր», Գ. հատոր, էջ 263, 265:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, նաև՝ Ե. հատոր, էջ 405, 426:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Ե. հատոր, էջ 410, 431:

նում խնդրի լուծումը թողնում է Քրիստափորի հայեցողությանը: Ֆիլիպեից Սարգիսը գրում է նոր նամակ, որում հիմնավորում էր այն միտքը, որ Քրիստափորի պես ուժեղ անձնավորությանը «չպիտի տանել մահուան...», նրան պետք է խնայել...» և առաջարկում, որ Ցուցական մարմինը գրի Քրիստափորին, հայտնի, որ նրան ազատում է գործին վճռական օրը մասնակցելուց և պահանջի, որ ուրիշը նրան փոխարինի: Այդ նամակում Սարգիսը նաև հայտնում էր, որ ինքն իրեն ավելի օգտակար է համարում Վանի շրջանի համար, առանց մատնանշելու, որ վճռական պահին Քրիստափորին փոխարինող թեկնածուն լինելու է Կոստանդինը: Սարգսի այդ նամակն անհաճո տպավորություն է թողնում: Ցուցական մարմինն իր պատասխանում խնդրի լուծումը դարձյալ թողնում է Քրիստափորի հայեցողությանը, բայց նաև հայտնում, որ, ի տարբերություն Սարգսի, ինքն այլ կարծիք ունի պատմության մեջ անհատի դերի վերաբերյալ: Վ. Քենդիրյանի ձեռքով մաքրագրված այդ նամակը, ըստ երևույթին, կարդացել էր նաև բանից անտեղյակ Քրիստափորը, որի վրա նամակը կարող էր և անհաճո տպավորություն գործել<sup>1</sup>:

Խնդրի մյուս մասը կապված էր Կոստանդինի հետ: Որպեսզի ապահովի իր մուտքը Կ. Պոլիս՝ Քրիստափորին փոխարինելու համար, Կոստանդինը նրան գրած նամակներում առաջարկում էր ձեռնառումբերի համար անհրաժեշտ կադապարների ձուլումը կազմակերպել տեղում, գտնելով, որ դա ավելի դյուրին կլինի, քան պատրաստի ձեռնառումբերը Բուլղարիայից կանանց միջոցով Կ. Պոլիս փոխադրելը: Նամակներում խոսվում է լոկ Կ. Պոլսում ձուլման տեխնիկական խնդիրների մասին և ոչ մի խոսք Քրիստափորին փոխարինելու պատրաստակամության մասին: Դրանցից մեկում լոկ ակնարկ կա Կոստանդինի իրական մտադրության մասին. «...միայն թե... ինձ մի մաս հանէք, բացի խնձորից (ձեռնառումբ ձուլելուց - Հ.Գ.) մի բան էլ... տուէք»<sup>2</sup>:

Անտեղյակ Կոստանդինի իրական նպատակին, Քրիստափորը Ցուցական մարմինն առաջարկում է Կոստանդինին մտցնել Կ. Պոլիս՝ տեղում կադապարներ ձուլելու համար: Առաջարկը սկզբում մերժվում է՝ մատնանշելով Կ. Պոլսի խիստ պայմանները և վտանգը: Բայց, տեսնելով Քրիստափորի նեղսրտելը, նրան չվիրավորելու համար, ի վերջո, համաձայնություն է տրվում Կոստանդինի Կ. Պոլիս մուտքի համար, ինչը դեպքերի հետագա բերումով, այդպես էլ տեղի չունեցավ:

Այսպիսով, թե՛ Սարգսի, թե՛ Կոստանդինի, թե՛ Արևմտյան բյուրոյի պարագայում Քրիստափորն անտեղյակ էր իր հետ կապված նրանց մտադրություններին: Ցուցական մարմինն էլ, իր հերթին, տեղյակ չէր, թե որտեղից են գալիս այդ նախաձեռնությունները: Ստեղծվել էր մի իրավիճակ, որը, բնականաբար, պետք է առաջ բերեր որոշ անհասկացողություններ Քրիստափոր - Ցուցական մարմնի անդամներ հարաբերություններում:

Առայսօր առեղծվածային են մնացել և մեկնաբանության կարիք ունեն նաև ՀՅԴ Խորհրդի աշխատանքներին մասնակցելու շարժառիթով Կ. Պոլսից Վ. Քենդիրյանի դուրս գալու հանգամանքները: Առավել ևս, որ ժնև մեկնելու փոխարեն, նա շտապել էր Սոֆիա, որտեղ Ֆիլիպեի փորձարկումներից հետո գտնվում էր Ք. Միքայելյանը և այդպես էլ չի մասնակցել ՀՅԴ Խորհրդի աշխատանքներին: Բնականաբար, հարց է ծագում, թե իրականում ո՞վ էր նախաձեռնել Կ. Պոլսից Վ. Քենդիրյանի դուրս գալը և ի՞նչ նպատակով:

Համաձայն Ցուցական մարմնի տեղեկագրի և արձանագրության՝ Վռամշապուհը Կ. Պոլսից դուրս էր եկել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պահանջով՝ իբրև Ցուցական մարմնի ներկայացուցիչ ՀՅԴ Խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար<sup>3</sup>:

Եղեռնական ատյանին տված ցուցմունքներում հարցի վրա լույս սփռող բացատրություններ է տվել Է. Ժորիսը. «Անցած տարւայ մարտին որոշուած էր Միթինկ մը գումարել Հայ Դրօշակ քոմիտէին յեղափոխականներէն... (նկատի ունի ՀՅԴ Խորհրդի նիստը - Հ.Գ.) Պոլսոյ յեղափոխական մասնաճիւղին կողմէ ալ որոշուած էր Վռամշապուհը իբրեւ պատուիրակ դրկել յիշեալ Միթինկին: Վռամշապուհի պաշտօն յանձնուած էր Միթինկին մէջ հաշիւ տալ Պոլսոյ յեղափոխական մասնախումբի գործերուն նկատմամբ և մանրամասնօրէն բացատրել, թէ անիծապարտ գաղափարը գործադրելու համար ի՞նչ ձեռնարկներ և միջոցներ ըրած է Պոլսոյ մասնաճիւղը և թէ անոր գործունէութիւնը ի՞նչ արդիւնք և հետեւանք ունեցած է. և ո-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 428:  
<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 414-415:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 205, Ե. հատոր, էջ 427:

րովհետեւ անիծապարտ արարքին գործադրութեան պայմանաժամը կը մօտիկանար (ընդգծումը մերն է - Հ.Գ.), Վռամշապուհը Միթինկին մէջ պիտի յայտնէր, թէ դեռ ի՛նչ կառքի զուշութիւններու և գործողութեանց կը կարօտի գործին կատարելագործուիլը. ասկէ զատ Վռամշապուհի հաշիւ պիտի տար նաեւ Պոլսոյ քօմիտէին ղրկուած դրամներուն գործածութեանց վրայ... Ուստի այս նկատառումներով որոշուեցաւ ժընեվ դրկել Վռամշապուհը, որ Սօֆիա երթալով, հոն ներկայացաւ Սամուէլ Ֆայնի, երբ անիկա փորձեր ընելու կը զբաղէր հոն. Վռամշապուհ թէւ ուզեց Սամուէլ Ֆայնէ ալ հրահանգ առնել, սակայն այս վերջինը իր քով վար դրաւ Վռամշապուհը, որպէս զի իր կատարած փորձերուն հետեւանքով պոմպաներուն վրայ ձեռք բերուած կատարելագործումներուն աստիճանն ու եղանակը իրեն ցուցնէ...»<sup>1</sup>:

Է. Ժորիսի ցուցմունքները, ճշմարտանման լինելով և հիմնականում չհակասելով Ցուցականի տեղեկագրին, այնուհանդերձ, որոշ հարցադրումների տեղիք են տալիս:

Նախ, ինչու՞ Ցուցական մարմինը նման կարևոր համաժողովին մասնակցելու համար չի գործուղում իր փորձված և ճանաչված անդամներից մեկին: Չէ՞ որ Վ. Քենդիրյանն այդ մարմնի միակ անդամն էր, որը չէր ընտրվել ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի կողմից: Երկրորդ, ինչու՞ ժնն մեկնելու փոխարեն Վռամշապուհը հայտնվեց Սօֆիայում, չնայած ՀՅԴ Խորհուրդը 1905 թ. փետրվարի վերջից արդեն գումարվել էր: Արդյո՞ք տարօրինակ չէ, որ Քրիստափորն իր զինակցին թույլ չի տալիս մասնակցելու կուսակցական կարևոր համաժողովին, որին, ի դեպ, ուղարկել էր իր գրավոր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ<sup>2</sup>: Երրորդ, ինչո՞վ բացատրել, որ Վ. Քենդիրյանը Կ. Պոլսից հեռացել էր Է. Ժորիսի անվան տակ՝ վերջինիս անցագրով<sup>3</sup>:

Նախ առաջին հարցադրման մասին: Ակնհայտ է, որ Քրիստափորի հրաժարվելուց հետո ժնն մեկնելու առավել հարմար թեկնածուն պետք է լիներ Սաֆոն: Այդ դեպքում ինչու՞ Վռամշապուհը և ոչ նա: Հարցի պատասխանը տալիս են Ցուցական մարմնի արձանագրությունը և դեռևս 1904 թ. դեկտեմբերի 30-ին ՀՅԴ Արևմտյան բյուրոյին Քրիստափորի գրած նամակը: Դրանք վկայում են, որ նախ ժննից, ապա՝ Քրիստափորի կողմից եղել են առաջարկներ, որ ՀՅԴ Խորհրդին Ցուցական մարմինը ներկայացնի Սարգիսը, բայց այդ առաջարկները մերժվել են այն հիմնավորմամբ, որ «նրա հայեացքները ընդհանուր գործի վերաբերությամբ բոլորովին հակառակ էին Ցուց. ընկերների ունեցած կարծիքներին»: ՀՅԴ Խորհրդին մասնակցելու համար Ցուցական մարմինը սկզբում ընտրում է Սաֆոյին, բայց վերջինս, ինչպես կանխատեսել էր Քրիստափորը, նույնպես հրաժարվում է մեկնել ժնն: Ի վերջո, ՀՅԴ Արևմտյան բյուրոյի համառ խնդրանք-պահանջներից հետո, Ցուցական մարմինը որոշում է իբրև իր ներկայացուցիչ ուղարկել Վ. Քենդիրյանին՝ նախապես կազմված գրավոր տեղեկագրի հետ միասին<sup>4</sup>: Փաստորեն կատարվում է այն, ինչ նշված նամակի ստորև բերվող տողերում հնարավոր էր համարում Քրիստափորը. «...եթէ մեզնից (ընտրուած պատասխանատուներից) մէկը անկարող լինի ներկայ մեր պարագաներում հեռանալ գործի վայրից (որ համարեա անտարակուսելի է) մենք կ'ուղարկենք մէկին, որը մեր գործերին մօտ է, մեզնից հրաւիրուած է մեզ ընկերակցելու եւ կարող է ցուցականը ներկայացնել»<sup>5</sup>:

Ակնհայտ է, որ վերը նշված տողերում խոսքը գնում է Վ. Քենդիրյանի մասին, որը այդ պահին Ցուցականի միակ չընտրված և անդամակցելու համար հրավիրված գործիչն էր: Քրիստափորը ոչ միայն հնարավոր էր համարում Կ. Պոլսից նրա դուրս գալը, այլ, ինչպես կտեսնենք, նաև դա անհրաժեշտ էր համարում «Նժույզի գործի» հետ կապված: Ինչ վերաբերում է Սարգսի հարցին, ապա, ի սկզբանե նրա թեկնածությունն առաջադրվել էր ոչ թե Քրիստափորի, այլ՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոյի կողմից:

Ինչ վերաբերում է մյուս հարցադրումներին, դրանց պատասխան բանալին նախ առկա է Է. Ժորիսի ցուցմունքների այն մասում, որտեղ խոսվում էր «Նժույզի գործի» իրականացման ժամանակը մոտենալու մասին: Ռուբինան, իր հերթին, վկայում է, որ Ֆիլիպետն փորձերն ավարտվել էին, և իրենք երկու պայուսակ լիքը ռումբերով պատրաստվում էին մտնել Կ. Պո-

<sup>1</sup> «Երլտրզի Մահափորձը», էջ 44-45:

<sup>2</sup> Տե՛ս «Նիւթեր», Բ. հատոր, ք. տպագր., խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրուք, 1985, էջ 228:

<sup>3</sup> Տե՛ս «Մշակ», 15 մարտի 1905, N 45, 2 օգոստոսի 1905, N 151:

<sup>4</sup> Տե՛ս «Նիւթեր», Ե. հատոր, էջ 427:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 411:

լիս, երբ Սոֆիա եկավ Վռամշապուհը<sup>1</sup>: Վերջապես, Ցուցական մարմնի արձանագրության մեջ նշված է, որ Վ. Քենդիրյանի մասնակցությամբ տեղի ունեցած և աղետով ավարտված ռումբերի փորձարկման օրը Քրիստափորը պատրաստվում էր նրա և Ռուբինայի հետ Բուլղարիայից անցնել Վիեննա՝ հանդիպելու Ռոստոմին և ՀՅԴ Արևմտյան բյուրոյի այլ գործիչներին: Քրիստափորի խոսքերով, դա կարող էր տեղի ունենալ լուրջ ռումբերի փորձարկումներն ավարտվելու դեպքում<sup>2</sup>:

Նշված փաստերի համադրումը թույլ է տալիս անել եզրահանգում, որ Վ. Քենդիրյանի Վ. Պոլսից դուրս գալու անմիջական նախաձեռնողը Քրիստափորն էր: Դա կարող էր պայմանավորված լինել միմյանց փոխկապակցված երկու խնդիրներով.

1. Դավադրական գործերում անվարժ, զուցե նաև ձեռնարկի հաջողության հարցում թերահավատ, Վռամշապուհին գործնականում ապացուցել ռումբերի կատարյալ լինելը և նրան ձեռնառումբեր օգտագործելու որոշակի փորձառություն հաղորդելը,

2. Օսմանահպատակ Վռամշապուհի համար Եվրոպացու կարգավիճակ ապահովելը, ինչը վերջինիս հնարավորություն կտար տաղավար մտնել: Այն, որ Վռամշապուհի հետ կապված նման խնդիր կար, արձանագրված է նաև Ցուցականի տեղեկագրի հետևյալ տողերում. «... Վռամը (Վ. Քենդիրյանը - Հ. Գ.), Աշոտը ի՞նչ կերպ պետք է յարմարուին ցենզերին, պետք է հիւրանո՞ց տեղափոխուին, թէ արտասահման դուրս գան եւ նորից ներս մտնեն իբրեւ տուրիստներ... այդ... եւ այլ մանրամասնութիւններ, թողնուեցին ապագային որոշելու՝ երբ ռումբեր կ'ունենանք եւ անելի մօտից կը ծանոթանանք բոլոր պայմաններին»<sup>3</sup>: Այսպիսով, միայն Վռամշապուհի աննկատ Եվրոպա անցնելով և այնտեղից որպես օտարերկրացի Վ. Պոլիս վերադառնալով հնարավոր կլինէր լուծել այդ խնդիրը: Է. Ժորիսի անցագիրը պիտանի չէր տաղավար մտնելու համար և այն Վռամշապուհին անհրաժեշտ էր միայն Վ. Պոլսից իր հեռանալն աննկատ դարձնելու համար: Ցուցականի մյուս անդամների համար լուծելիք նման խնդիր չկար:

Վերը նշված երկու խնդիրներն էլ օրակարգում կարող էին հայտնվել միայն նախապատրաստական աշխատանքներն ավարտին մոտենալու դեպքում: Իսկ որ դրանք ավարտվել էին, այդ մասին վկայում են ինչպես Քրիստափորի 1905 թ. փետրվարի 19-ի նամակը, նրա ու իր զինակիցների Ֆիլիպեից Սոֆիա անցնելը, այնպես էլ Ցուցականի հիշատակված արձանագրությունը, Ռուբինայի և Է. Ժորիսի վկայությունները:

Օրակարգում ձեռնարկի իրականացման եզրափակիչ արարն էր: Դաշնակցության առաջնորդին, սակայն, վիճակված չէր տրամաբանական ավարտի հասցնել իր համար պատվախնդրության հարց դարձած գործը: 1905 թ. մարտի 4 (17)-ին, Սոֆիայի մերձակայքում գտնվող Կնյաժևո գյուղի մոտ՝ Վիտոշ լեռան լանջին, հայ և մակեդոնացի մեկ տասնյակից ավելի հեղափոխականների ներկայությամբ, տեղի է ունենում ձեռնառումբերի վերջին փորձարկումը: Վերոշարադրյալ նյութի տրամաբանությունից ելնելով՝ բնական էր ռմբաձիգի դերում Վռամշապուհի հանդես գալը: Բնական էր նաև այդ պատասխանատու պահին երիտասարդ և անփորձ զինակցի կողքին կանգնելու Քրիստափորի վճիռը: Բայց, փորձարկումն աղետալի վախճան ունեցավ:

Աղետի մանրամասն նկարագրությունը տալիս է «Դրոշակ»-ը՝ դեպքից անմիջապես հետո հրապարակված նյութում, որից քաղվածաբար բերենք հատվածներ. «Քրիստափոր Միքայելեանը... գնաց մերձակայ լեռներում թագնւած մի ձոր, ռումբի փորձեր անելու... Փորձի նպատակն էր պարզել ընկեր Էդուարդին (Է. Ժորիսի անվան տակ ծախված Վռամշապուհին - Հ.Գ.)... ռումբերի կատարելագործման նորանոր ձևերը, մշակուած իր ձեռքով, արդիւնք երկար ամիսների աշխատանքի... Ոմանք անաջողութիւն էին գուշակում, զգուշութեան յորդոր կարդալով... Անյողդողդ էր միայն մէկը - Քրիստափորը, վստահ նախորդ փորձերին, հաւատացած աներկբայ աջողութեան:

Ահա վերջապէս ռմբաձիգը՝ Էդուարդ դիրք բռնեց: Միւսները, զգուշութեան համար, հեռացան...: Անշարժ մնաց միայն Քրիստափորը, անբաժան ռմբաձիգ ընկերոջից: Ոչ մի խնդիրք, ոչ մի յորդոր, ոչ մի նախազգուշացումն՝ տեղահան չ'արեց նրան...

<sup>1</sup> Տե՛ս «Յեղափոխական ալպոմ», 1972, N 4, էջ 109:

<sup>2</sup> Տե՛ս «Նիւթեր», Ե. հատոր, էջ 431:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 204:

Անցաւ մի քանի րոպէ: Ու յանկարծ որոտանման դղրդոցը ցնցեց շրջակայքը... Հեռացած ընկերները՝ ճնշող նախազգացումով ներքև սլացան... Եւ նրանց աչքերի առջև բացւեց սոսկալի ողբերգութեան ահաւոր տեսարանը. - Քրիստափորը թաւալգլոր, հազիւ շունչը բերանին, էդուարդը հեռու նետուած, խուած ձիւնախառն հողի մէջ՝ արդէն մահացած... Անվեհեր գործիչների փոխարէն երկու դիակ...»<sup>1</sup>:

Աղետի պատճառը Վ. Քենդիրյանի՝ ձեռնառումքի պայթուցիկի զսպանակը սեղմելուց հետո, փոքր ինչ հապաղելն էր, ինչի հետևանքով ռումբը պայթել էր նրա ձեռքում: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ ժամանակին եղել են նաև Վիտոշի աղետի այլ բացատրություններ: Մասնավորապէս, Սաֆոն արտահայտել է այն տեսակետը, թե աղետն արդյունք էր Քրիստափորի կողմից ակամայից թույլ տված անզգուշության: Ըստ Սաֆոնի, վերը նշված պատճառներով դժգոհ լինելով Յուցականի մնացած անդամներից, հատկապէս, Վ. Քենդիրյանից, Քրիստափորը հուզված վիճակում, իբր, որոշել է «անվճռականության» ու «մեծամտության» համար «դաս տալ» կամ «վախեցնել» վերջինիս և նրան պարտադրել է նետել կարճ պատրույգով ռումբ, որը, պայթելով Վռանշապուհի ձեռքում, պատճառ է դարձել թե՛ նրա, թե՛ Քրիստափորի զոհվելուն<sup>2</sup>:

Անշուշտ, դեպքերի թարմ տպավորությամբ, ասեկոսեներն անխուսափելի էին: Բայց անհնար է, որ Քրիստափորի նման, որպէս կանոն, հավասարակշռված և պատասխանատվության բարձր զգացում ունեցող գործիչը, որքան էլ ինչ-որ բանից զայրացած կամ հուզված լիներ, իր համար պատվախնդրության հարց դարձած ձեռնարկի նախօրեին դիմեր նման քայլի, նամանավանդ, որ նա, առավել քան որևէ մեկը, գիտեր փորձարկվող ռումբերի իրական գործողունը և դրանցից սպասվող վտանգի չափը: Բացի այդ, Սաֆոնի վարկածը համոզիչ չէ, քանի որ նա անձամբ ներկա չի եղել դեպքին և վարկածը կառուցել է սոսկ ասեկոսեների ու անձնական ենթադրությունների վրա: Մինչդեռ ռումբի փորձարկմանն անմիջականորեն մասնակցած և ձեռնառումքն իր ձեռքով մարտական վիճակի բերած Կոստանդինը դեռևս 1906 թ. հունիսի 21-ին տված ցուցմունքներում ոչ միայն հերքում է փորձարկման տեխնիկական և այլ կողմերի հետ կապված Սաֆոնի հարցադրումները, այլև տալիս ուշագրավ վկայություն: Ըստ նրա, Քրիստափորը որոշել էր անձամբ նետել ձեռնառումքը՝ երիտասարդ ընկերոջը ցույց տալու համար, թե ինչպէս պետք է անել դա, որից հետո նույնը պետք է կատարեր Վռանշապուհը: Մինչդեռ վերջինս համառորեն պահանջել է, որ ինքը նետի ձեռնառումքը՝ ասելով թե դրանում որևէ դժվար բան չկա<sup>3</sup>: Անցել է շուրջ 115 տարի, բայց առայսօր Սաֆոնի վարկածի օգտին վկայող փաստեր չեն բացահայտվել:

Վիտոշի աղետը ոչ միայն հայոց ազատամարտի շարքերից խլեց երկու անձնվեր գործիչների, ՀՅԴ Կ. Պոլսի Յուցական մարմնին զրկեց իր առանցքային ու ղեկավար գործչից, այլև բացառեց «Նժույգի գործը» նախապէս ծրագրված եղանակով ավարտին հասցնելու հնարավորությունը: Դրանով ավարտվում է Յուցական մարմնի գործունեության երկրորդ փուլը: Վերջինիս սպասվում էր միանգամայն նոր իրավիճակ և ձեռնարկն ավարտին հասցնելու ուղղությամբ մաքառումների որակապէս տարբերվող նոր ամիսներ, որոնք նրա գործունեության նոր փուլը պետք է դառնային:

**Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.).** В статье проводится всесторонний анализ деятельности Ответственного Указывающего органа АРФ Дашнакцутюн, созданного с целью подвергнуть террору Красного (кровоавого) султана Абдула Гамида - в период со вступления в Константинополь до трагедии Витоша. На основе разнородных источников, в том числе документов, впервые опубликованных за последние годы со стороны АРФ Дашнакцутюн, подробно освещается ряд эпизодов деятельности Ответственного Указывающего органа, которым историки до последнего времени не уделяли внимания. Путём сопоставления и анализа взаимоисключающего фактического

<sup>1</sup> «Դրօշակ», 1905, N 4, էջ 51-52:

<sup>2</sup> Տե՛ս «Նիւթեր», Գ. Հատոր, էջ 263, 265, 267-268, Ե. հատոր, էջ 430: Նաև՝ Մատթէոսի յուշատետրէն, «Հայրենիք» ամսագիր, 1958, N 6, էջ 66:

<sup>3</sup> Տե՛ս «Նիւթեր», Ե. հատոր, էջ 441-442:

материала в статье даются исчерпывающие ответы на некоторые вопросы, которые по сей день вызывали споры. В частности, на основе недавно опубликованных документов представлены малоизвестные страницы деятельности лидера АРФ Дашнакцутюн Христофора Микаеляна в Болгарии, раскрываются реальные обстоятельства его гибели, а также гибели члена Ответственного Указывающего органа Врамшапуха Кендирына.

**Ключевые слова:** Ответственный-Указывающий орган АРФ Дашнакцутюн, «Дело конья», вариант годового, вариант селамлыка, ручная бомба, бомба-какета, Совет АРФ Дашнакцутюн, Западное бюро, Отчет Указывающего органа, протоколы Указывающего органа.

**Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905).** The article analyses the activity of ARF's Responsible-Indicative Organization, which was created in order to terrorize the "Red Sultan" (or "Bloody Sultan")-Abdul Hamid II. The paper investigates the duration of the above mentioned organization's activity from moving to Constantinople until the disaster of Vitosh (September, 1904 - March, 1905).

On the basis of various sources, including the numerous documents published by the ARF in the last few years, the research discovers the episodes of activity of ARF's Indicative organization, which were out of historians' attention until recent years. Through comparison and analysis of contradictory documentary materials, in the article are given some final answers to debatable historical issues.

In particular, the article presents a few famous pages of ARF's leader Christaphor Mikaelian's actions in Bulgaria. The paper also discovers the real circumstances of the tragic death of Vramshapuh Kendiryan and Chrisaphor Mikaelian.

**Key words:** Responsible-Indicative Organization of ARF-Dashnakstutyun, "The Case of Nzhuyk", the version of Tarekan, the version of Selamlik (muslim Friday prayer), hand-granade, carriage-granade, the council of ARF, Western Bureau, bulletin of Indicative Organization, protocols of Indicative Organization.